

ՏԵՂԵԿԱՏՈՒԻ

ДІЄГІЄГ/АІДІУ

ديجيجادو

Հրատարակութիւն Գահիրէի ՀԲԸՄ-ի

للمرة جمعية القاهرة الخيرية الأرمنية العامة



ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻՒՌԻՔ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Մտորումներ.....1
Մ. Երամեան

Յուզիչ հրաժեշտ մը
(Հայ Գաբրիելի մեկնումին առիթով)2

Զեկոյց Հայաստան-ՍՓիւռք 6-րդ համագումարին.....3

Հայերէնը՝ հին եւ վաւերական4

Դոկտ. Երուանդ Զօրեանի ելոյթը5

«Հայաստան եւ Հայերը Արաբական Մամուլին մէջ
1876-1923» երկին Գ. Հատորը Հրատարակուած7
ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝ Անայիս Ճիգմէճեան

Երուսաղէմի հայ Թագուհիները8

ՀՀՀ-ի նոր պատասխանատուն9

Տիգրան Մեծի նուիրուած օփերաներ.....9

Աւագ Սարկաւազին շիջումը.....10

Յաւակցագիր Ա. Եափուճեանի11

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ-ի Աղեքսանդրիոյ մրցաշարքը.....12
Սօսի Ներեպեան-Յակոբեան

ՀՄԸՄ Յուսաբերի մրցաշարքը14
Սօսի Ներեպեան-Յակոբեան

ՀՄԸՄ Կամքի Մրցաշարքը.....16
Սօսի Ներեպեան-Յակոբեան

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի Գահիրեի մրցաշարքը17
Սօսի Ներեպեան-Յակոբեան

ԽՄԲԱԳԻՐ
Մարուշ Երամեան

**ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՈՒ**
Տոքթ. Վիգէն Ճիգմէճեան

**ՍՐԲԱԳՐԻՉ
ՎԵՐՍՏՈՒԳԻՉ**
Անայիս Ճիգմէճեան

**ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ
ԶԵԽՈՐՐՈՒՄ**
Շահէ Լուսարարեան

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Nubar Digital

**Գահիրեի ՀԲԸՄ-ի
լուրերուն հետեւեցէք
www.agbuegypt.com
կայքէջով:**

**Ծանօթացէք «Հայաստան
եւ Հայերը Արաբական
Մամուլին մէջ. 1876-1923»
կայքէջի սիւլեթրուն
www.arminmedia.com
կայքէջով:**

**Թիւ. 85 Նոր Շրջան
ՂՈՎՏԵՄԲԵՐ 2017**



ԴՊՐՈՑԸ

Կրկին Վերամուտ է: Տղոց խանդավառությունը ամեն տարի նուազում կ'արձանագրե, նոյնիսկ շատ փոքրերուն պարագային, որոնց երբ հարցնես՝ «Ուրա՞խ ես վերամուտին համար», մանկական անմեղութեամբ ըսուած յստակ «ոչ» մը կը լսես:

Միայն մե՞ր փոքրերն են, որ նման կեցուածք ունին դպրոցին, ընդհանրապէս ուսումին հանդէպ, թէ՛ այլ երկիրներու երեխաներն ալ նոյն տհաճութեամբ դպրոց կը յաճախեն:

Այս վիճակը բարելաւելու համար տարբեր երկիրներ տարբեր միջոցներու կը դիմեն: Ճիշդ նոյն մտահոգութեամբ ալ մեր գաղութը, ա՛յս տարի, որոշեց յանդուգն ուստումով մը փոխել դասաւանդումի ոճը եւ «այլ տարածք» տանիլ զայն:

Շատերու համար թերեւս այս փոփոխութիւնը էական չթուի, ուրիշներ «մսխում» որակեն եղած փոփոխութիւնները, այլ խումբ մը մեծ խոչընդոտ տեսնէ այս քայլը, սկիզբէն իսկ ձախողանքի ենթակայ, մանաւանդ կրթական պետական համակարգին ստիպողական գոյութեամբ. նաեւ այն արդարացումով, թէ «դպրոցը արդէն լաւ էր, աշակերտները լաւ, յաճախ շատ լաւ արդիւնքներ կ'ունենան պետական քննութիւններուն եւ այլն, ի՞նչ պէտքը կայ այս բոլորին»:

Իրողութիւնը սակայն, հակառակ բոլոր առարկութիւններուն, չի փոխուիր՝ քայլը առնուած է: Եւ գնդակը մե՛ր, ժողովուրդի դաշտին մէջ է արդէն: Ի՞նչ ընել:

Երկու յստակ ճամբաներ կը գծագրուին.

Ա. Կա՛մ դէմ կենալ առնուած քայլին, ամէն առիթի դժուարացնել աշխատանքը եւ ձախողութեան տանիլ այս նոր ծրագիրը,

Բ. Կամ հաւատալ նորութեան, հաւատալ, որ պարտաւոր ենք ժամանակի պահանջներուն հետեւիլ, գիտակցիլ որ ճանապարհը դժուար է, բայց ոչ՝ անկարելի, եւ կարելիին չափ օգնել յաջողութեան հասնելու:

Ինչո՞ւ:

Որովհետեւ ասիկա մեր միակ վարժարանն է, այլ խօսքով՝ մեր բոլորին, բոլոր «կողմերուն» վարժարանն է, եւ անոր ձախողութիւնը մեզ բոլորս պիտի ընկճէ:

Կարելի՞ է հեռուն կենալ եւ դիտել, անընդհատ կրկնելով, թէ «նման փորձերը սկիզբէն իսկ ձախողութեան մատնուած են»:

Բայց որո՞ւ ձախողանքին մասին է որ կը խօսինք: Մե՛ր ՎԱՐԺԱՐԱՆԻՆ, մեր կռուանին, մեր զաւակներուն երկրորդ տան մասին չէ՞ խօսքը:

Պիտի ուզե՞նք ձախողիլ:

Երբեմն պարտաւոր ենք, մե՛ր իսկ օգուտին համար, յստակ ընտրութիւններ կատարել:

Պէ՛տք է յաջողինք: Յաջողիլը **ընտրութիւն** իսկ չէ: Որպէս փոքրամասնութիւն այս երկրին՝ Եգիպտոսի մէջ, մեր պատմութիւնը միա՛յն յաջողութիւններու պատմութիւն եղած է, ամենէն անհաւատալի, դժուար եւ խոչնդոտներով լեցուն պայմաններուն մէջ իսկ, Պատր էլ Կամալիէն, Պօղոս Պէյ Եուսուֆեանէն, Նուպար Փաշա Նուպարեանէն եւ մնացեալ անուններէն սկսելով, մինչեւ այսօրուան սերունդը:

Ի վերջոյ պէտք է յիշենք, որ Փոր Սայիտի վրանաքաղաքի օրերէն, ՀԲԸՄ-ի գլխաւոր աշխատանքներէն մէկը, դարմանատուն-հիւանդանոցի կողքին, դպրոցը եղած է:

Էական է նշել նաեւ, որ Սփիւռքի այլ դպրոցներ եւս կարիքը կը զգան նման կարելոր «ոստումի» մը. պատասխանատուներ եւ դասատուներ կ'արտայայտուին այդ մասին յօդուածներով թէ հարցազրոյցներով: Այս առումով մեր գաղութին եւ մեր վարժարանին այս մեծ անկիւնադարձը կրնայ առաջին օրինակ եւ ներշնչարան ըլլալ Սփիւռքի մնացեալ գաղութներուն համար:

Դպրոցէն պիտի գայ նոր սերունդը գլխաւորաբար: Եւ որպէս այդ, դպրոցը պէտք է դառնայ անխտիր մեր բոլորին գուրգուրանքի առարկան:

Մ. Երամեան



ՅՈՒԶԻՉ ՀՐԱԺԵՇՏ ՄԸ

Սեպտեմբերի առաջին շաբաթը եգիպտահայոց հրաժեշտ տուաւ Հայր Գաբրիէլ Սարգիսեան, գրեթէ տասը տարիներ ծառայելէ ետք գաղութին:

Շաբաթ, 9 Սեպտեմբերի երեկոյեան, հրաժեշտի ընթրիք մը կազմակերպուած էր Լը Պաշա զբօսանաւին վրայ, որուն հրաւիրուած էին գաղութիս երեւելիները ...

Յաջորդ օր, Կիրակիի պատարագին ընթացքին, իր խօսքին մէջ հայ Գաբրիէլ ըսաւ.

«Քարոզխօսութեան փոխարէն այսօր աւելի կ'ուզեմ երախտիքի եւ շնորհակալութեան, ինչպէս նաեւ գնահատանքի եւ ուրախութեան իմ զգացումներս արտայայտել Սրբազան հօր եւ եգիպտահայութեան»:

«Երջանիկ եմ յիշատակել եւ փառք ու գոհութիւն կը մատուցանեմ Աստուծոյ, որ ինը եւ աւելի տարի առիթ ունեցայ ծառայութիւնս մատուցելու եգիպտոսի հայոց թեմին եւ յարակից հովուութիւններուն»:

«Սրբազան հայր, ուրախութեամբ կ'անդրադառնամ 2009 թուի սկզբնաւորութեան, երբ յարմար նկատեցիք զիս ծառայութեան կոչելու Սուտան, որպէս հայոց հոգեւոր հովիւ, իսկ մինչ այդ պատիւ էր ինձ համար եգիպտոս մուտքս աղօթքով սկսիլ Ս. Ծննդեան ճրագալոյցի պատարագին մատուցմամբ, Գահիրէի առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ»:

«Եւ սկսաւ հոգեւոր ծառայութեան հետաքրքրական եւ գնահատելի շրջան մը: Ճիշդ է, որ այս ընթացքին նաեւ դժուարութիւններ եղան, սակայն ուրախ եմ հիմա այդ դժուարութիւններուն համար,



քանզի մեր, իւրաքանչիւրիս կեանքը դարբնոցի նման է, ուր նորին մեծութիւն ժամանակը եւ նորին վսեմութիւն Դժուարութիւնները ուսուցիչ-դարբիններ են սորվեցնելու եւ կոփելու: Դժուարութիւնն ու տառապանքը կ'իրագործեն համբերութիւն, համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս, իսկ յոյսը ամօթահար չ'ըներ»:

Հայր Գաբրիէլ յուզումով եւ պատկերալի ոճով նկարագրեց իր կեանքն ու եգիպտական փորձառութիւնը, խորապէս

գնահատելով եգիպտահայութեան բարեկամական եւ ջերմ ընդունելութիւնը իրեն, բայց մանաւանդ Առաջնորդ Սրբազան հօր՝ Աշոտ Եպիսկոպոսի հայրական վերաբերմունքը:

Գաբրիէլ վարդապետ 2003 թուականին եկած է եգիպտոս եւ մասնակցած Ղպտի Ուղղափառ Եկեղեցոյ դասընթացքներուն, միաժամանակ արաբերէն սորվելով: Ապա, 2009-ին վերադարձած է, որպէս առաջնորդական փոխանորդ եւ Սուտանի հոգեւոր հովիւ:

Աստուածաբանութեան մէջ տիրացած է վարդապետական աստիճանի, պաշտպանելով «Տէրունական Աղօթքի Հայ Միջնադարեան Մեկնութիւնները»:

Իր ծառայասէր հոգին եւ լեցուն միտքը Հայ Գաբրիէլը դարձուցած են սիրելի եւ փնտռուած դէմք մը գաղութին, որուն համար իրապէ՛ս յուզիչ էր հրաժեշտի պահը:

Կիրակիի պատարագին բոլոր ներկաները առիթ ունեցան անհատապէս իրենց բարի երթի մաղթանքները արտայայտելու եւ բեղուն կեանք մը մաղթելու Հայր Գաբրիէլին, Իրաքի հայ գաղութին իր հոգեւոր ծառայութեան մէջ:



ԶԵԿՈՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓԻԻՌ 6-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ

Հակառակ անոր, որ այս կարելու համաժողովին մասին Սփիւռքի թէ Հայաստանի բոլոր թերթերը գրեցին, կարիքը սակայն մի՛շտ կայ կենդանի խօսքով եւ մասնակիցի մը բերնէն լսելու համաժողովին մանրամասնութիւնները եւ միտքերուն մէջ ծնած բազմաթիւ հարցումներուն պատասխան ստանալու:



վրայ գտնուող ութ նիւթերու կողքին:

Յարգելի զեկուցաբերը բացատրեց թէ ինչո՞ւ կարելու է Հայաստանէն արտահոսքը կասեցնել. «Որովհետեւ,- ըսաւ ան,- հայրենալքումի հետեւանքով տեղի կ'ունենայ ուղեղնե-

Այս նպատակով է, որ Չորեքշաբթի, 25 Հոկտեմբերի երեկոյեան, ՀԲԸՄԻ Սաթենիկ Չագրը գողտրիկ սրահէն ներս հանդիպում մը կազմակերպուած էր ՀԲԸՄ-ի պատուոյ ատենապետ պարոն Պերճ Թէրզեանի եւ տիկնոջ հետ, որոնք մասնակցած էին Հայաստան-Սփիւռք 6-րդ համաժողովին, որ տեղի ունեցած էր Հայաստանի մէջ, 18-20 Սեպտեմբերին:

Երեկոյին բացումը կատարեց Գահիրէի ՀԲԸՄի ատենապետ տոքթ. Վիգէն Ճիզմէճեան եւ հրաւիրեց Տէր եւ Տիկին Թէրզեանները:

Պարոն Թէրզեան ինք կը ներկայացներ նիւթը, իսկ ազնիւ տիկինը կ'ընթերցեր նամակներն ու յայտարարութիւնները:

Հետաքրքրական էր Պր. Թէրզեանի զեկոյցը, որ սկսաւ ընթերցումովը երկու նամակներու՝ իրեն եւ տիկնոջ հասած հրաւեր-նամակին, որ կը պարփակեր համաժողովին քննարկուելիք նիւթերուն ցանկը, ապա ի՞ր առաջարկներուն, որոնք նամակով մը ուղղուած էին Սփիւռքի նախարարութեան եւ ուր նամակագիրը կը պարզէր շատ կարելու եւ փշոտ հարց մը՝ Հայաստանէն արտագաղթը, որ, զարմանալիօրէն, տեղ չէր գտած համաժողովի օրակարգին

րու եւ տաղանդներու արտահոսք մը, որ կ'արգելակէ երկրին բնականոն զարգացումին թափը, ժողովուրդին նուազումը նաեւ կը տկարացնէ երկրին ինքնապաշտպանութեան կարողականութիւնը եւ բնակչութիւնը հետզհետէ նուազող երկիր մը, միջազգային գետնի վրայ չի կրնար բաղձալի գործընկեր մը ըլլալ այլ պետութիւններու»: Եւ այս էական հարցը լուծելու հետաքրքրական օրինակ մը բերաւ՝ Artzakh Roots Investment կազմակերպութեան աշխատանքը Արցախի մէջ: Զեկուցաբերը մանրամասնօրէն ներկայացուց նման աշխատանք մը Հայաստանի մէջ սկսելու կարելու կէտերը, մինչեւ իսկ պատասխանատու կարգուելիք անհատներու մասին խօսեցաւ:

Ապա զեկուցաբերը լայն գիծերով ներկայացուց համաժողովի երեք օրերու ծրագիրը, ինչպէս նաեւ անկէ դուրս տեղի





ունեցած մշակութային ձեռնարկները, որոնց գազաթնակետը կը կազմէր ՀԲԸՄ-ի կողմէ պատրաստուած «Խոստումը» պարային ելոյթը, նոյնանուն ֆիլմին դէպքերուն վրայ հիմնուած, որ խորապէս տպաւորած է ներկաները, որոնց մէջ եղած են, երկրի նախագահին, երկու կաթողիկոսներուն, վարչապետին եւ նախարարներու կողքին նաեւ էրիք Իսրայէլեան՝ Գըրգ Գրիգորեանի այս ֆիլմին առնչութեամբ «կտակ»ը իրագործողը եւ ֆիլմին բեմադրիչը՝ Թէրի Ճորճ, որոնց ի պատիւ, որպէս երախտագիտական արտայայտութիւն, յաջորդ օրը ՀԲԸՄ-ի նախագահ Պերճ Սեդրակեան շքեղ ճաշկերոյթ մը կազմակերպած է, որուն ներկայ եղած են պետական աւագանին, ՀԲԸՄ-ի ղեկավարութիւնը եւ կարգ մը բարերարներ:

Պարոն Թերզեան դրուատանքով խօսեցաւ 6-րդ համաժողովի կազմակերպումին եւ զեկուցաբերներուն մասին, որոնք բոլորն ալ արհեստավարժ անձեր են, գիտակ եւ հմուտ իրենց ներկայացուցած նիւթերուն:

Փակումի լիակատար նիստի ընթացքին կարդացուած է ընդունուած որոշումներուն յայտարարութիւնը, ուր հայ ժողո-

վորդը հանդէս կու գայ որպէս միասնական ժողովուրդ՝ Հայաստանի, Սփիւռքի եւ Արցախի տարածքին:

Զեկուցաբերը խօսեցաւ նաեւ այն հանդիպումին մասին, որ տեղի ունեցած է ՀԲԸՄ-ի Երեւանի կեդրոնին մէջ, 17 Սեպտեմբերին, նախագահ Պերճ Սեդրակեանի եւ այս համաժողովին առիթով Հայաստան գտնուող անդամներուն միջեւ, միութեան գործունէութեան եւ ծրագիրներուն մասին:

Զեկոյցին աւարտէն ետք ներկաները, որոնք լեցուցած էին փոքրիկ սրահը, հարցումներ ուղղեցին յարգելի զեկուցաբերին, որ սիրով եւ մանրամասնօրէն պատասխանեց եւ գոհացուց զիրենք:

Գլխաւորը այս հարցումներուն, որոնք ոչ միայն հարցնողին, այլ բոլորիս համար ալ կարեւոր է, առնուած որոշումներու գործադրութեան եւ անոր հետապնդումին կը վերաբերէր, որովհետեւ նախորդ համաժողովներուն եւս կարեւոր եւ օգտակար որոշումներ առնուած են, որոնք սակայն, դժբախտաբար մնացեր են որոշում, առանց որեւէ արդիւնքի:

Երեկոն վերջ գտաւ հիւրասիրութեամբ մը:

ՀԱՅԵՐԷՆԸ՝ ՀԻՆ ԵՒ ՎԱԻԵՐԱԿԱՆ

Այսօր մօտ 7000 լեզուով կը խօսի երկիր մոլորակի բնակչութիւնը, սակայն հրապարակի վրայ կան միայն ՎԵՑ իսկական այբուբեններ (pure alphabets), որոնք մինչեւ օրս կը գործածուին: Այդ վեցէն մէկը մերն է՝ հայերէնը, հետեւեալ շարքին մէջ.

Latin, Cyrillic, Greek, Armenian, Georgian, Hangul.

Հայերէնը նաեւ աշխարհի ամենահին այն տասը լեզուներէն է, որոնք տակաւին կենդանի են եւ կը խօսուին.

Tamil, Sanskrit, Egyptian, Greek,

Chinese, Aramaic, Hebrew, Korean, Armenian and Latin are (the TOP TEN) oldest known languages of the world still in existence today.

Ըստ ամերիկեան աշխարհահռչակ MIT հաստատութեան հետազօտութեանց՝ հայերէնը, որպէս ազդեցիկ լեզու, գիրքերու թարգմանութեանց գծով, աշխարհի առաջին 60 լեզուներուն մէջ կը գրաւէ 48-րդ դիրքը, Wikipedia-ի գծով՝ աշխարհի 59-րդ դիրքը, իսկ Tweet-ներու գծով՝ աշխարհի 57-րդ դիրքը:



ԴՈԿՏ. ԵՐՈՒԱՆԴ ԶՕՐԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ

Հայաստան-Սփիւռք համահայկական ճ-րդ համաժողովը վերջին օրը իր արդիւնքները ամփոփեց չորս ուղղութիւններով՝ «Հայաստանի զարգացման հիմնախնդիրներ», «Հայաստանի պաշտպանական քաղաքականութեան առանձնատկութիւնները ժամանակակից մարտահրաւերներու պայմաններուն մէջ», «Արտաքին քաղաքականութեան օրակարգ» եւ «Հայապահպանութեան հիմնախնդիրներ» նիւթերով կատարուած քննարկումներու լոյսին տակ:

Հայապահպանութեան հիմնախնդիրներու քննարկումներուն արդիւնքները ներկայացուց Սփիւռքի նախարարուհի Հրանուշ Յակոբեան, հետեւեալ առանցքներուն շուրջ.

Արեւմտահայերէնի պահպանում, տարածում, Սփիւռքի մէջ հայոց լեզուի եւ հայագիտական առարկաներու դասաւանդման աջակցութիւն եւ Հայաստանի եւ Սփիւռքի մասնագիտական ներուժի համախմբում:

«Սոյն յայտարարութեամբ երաշխաւորում ենք ...հետամուտ լինելու համահայկական նպատակների իրականացմանը»:

«Հայապահպանութեան հիմնախնդիրներ» թեմայով նիստերու ընթացքին (Երկուշաբթի, 18 Սեպտեմբեր, 2017) ելոյթ ունեցաւ ՀԲԸՄ-ի կեդրոնական վարչութեան անդամ եւ ՀՀ-ի հիմնադիր նախագահ դոկտ. Երուանդ Զօրեանը, «Համացանցը եւ հայկական ինքնութիւնը» նիւթով:

Զօրեան շրջանաւարտ է Հալէպի ՀԲԸՄ-ի Լազար Նաճարեան վարժարանէն եւ Սուրիոյ ելեկտրագիտութեան համալսարանէն: Վկայուած է մագիստրոսով՝ Հարաւային Քալիֆօրնիոյ, դոկտորականով՝ Գանատայի «ՄքԿիլ», իսկ MBA-ով՝ Փենսիլվենիոյ «Ուորթըն» համալսարաններէն: Ընտրուած է Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի արտասահմանեան անդամ եւ ստացած է Հայաստանի Հանրապետութեան Պետական շքանշանը՝ Հայաստա-



Նի նախագահ Սերժ Սարգսեանէն:

Նշենք, որ դոկտ. Երուանդ Զօրեան ելեկտրոնային ճարտարագիտութեան մարզէն ներս միջազգային համբաւ վայելող գիտնական մըն է: Ան խորհրդատու է շարք մը նորարարական հաստատութիւններու եւ թղթակից խմբագիր՝ գիտահետազօտական հրատարակութիւններու:

Եղած է փոխնախագահը Institute of Electrical and Electronic Engineers ընկերակցութեան՝ վարելով անոր ճարտարագիտական, համագումարներու եւ ուսուցողական բաժինները: Զօրեան ունի հնարողի 37 իրաւունքներ, հեղինակ է հինգ գիրքերու եւ 350-է աւելի գիտաուսումնասիրական յօդուածներու: Քանիցս ընտրուած է «Տարուան ամենաազդեցիկ գիտնական»ներէն մին:

Հայաստանի հետ կապը եղած է ամուր եւ գործնական: Հայկական ներուժը ծանօթացուցած է միջազգային շրջանակներու, Հայաստանի հետ փոխադարձ շահաբեր գործակցութիւններ մշակելով:

Շաբաթ, 9 Սեպտեմբեր 2017-ին, Եունիվըրսըլ Սթիւտիոյի «Կլոպ» սրահին մէջ, Հոլիվուտ, տեղի ունեցած է ՀԲԸՄ-ի Արեւմտեան Ամերիկայի Շրջանակային



յանձնաժողովի տարեկան Կալան: Այդ երեկոյ, երկար տարիներ միութեան նուիրաբերած իր ծառայութիւններուն համար, դոկտ. Երուանդ Զօրեան արժանացած է յատուկ գնահատանքի:

Ստորեւ կը ներկայացնենք դոկտ. Երուանդ Զօրեանի խօսքը, Հայաստան-Սփիւռք 6-րդ համագումարի ընթացքին:

**Համացանցը եւ Հայկական Ինքնութիւնը
Դոկտ. Երուանդ Զօրեան**

Ի՞նչ պահանջներ եւ կարիքներ ունի հայ ազգը, այսօր, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ: Սփիւռքի մէջ հայկական ինքնութիւնը պահելու համար, ւսանդական սահմանափակ հաստատութիւններ կան: Սահմանափակ են նաեւ հայեցի դաստիարակութեան համար կրթական ւսանդական ծրագիրներու թիւն ու հասանելիութիւնը հայ ուսանողներուն: Հայ մանուկներու եւ ուսանողներու 2-3 % տոկոսը միայն ամէնօրեայ կամ շաբաթօրեայ դպրոցներ կը յաճախէ, իսկ Հայաստանի մէջ, թէեւ կրթական ւսանդական ծրագիրները հասանելի են, բայց արդիակաւացման կարիք ունին:

Մենք, հայերս պատկանելիութեան արդէն ձեւաւորուած զգացում ունինք, որուն միջոցով կը կանխորոշենք մեր ազգային ինքնութիւնը: Այս ինքնութիւնը քանի մը հիմերու վրայ հաստատուած է՝ լեզու, պատմութիւն, կրօն, տարածք, մշակոյթ, ւսանդոյթներ, խորհրդանիշեր, հպարտութիւն եւ հերոսներ: Մեր օրերուն, երբ հաղորդակցութեան թուլացման եւ տուեալներու կորուստի միտում կայ, հայերու պայքարը, իրենց հայկականութեան պահպանման համար առօրեական է, իսկ ինքնութեան պահանջը ակներեւ է, յատկապէս հայրենիքէն դուրս կազմուած համայնքներու մէջ:

SS ոլորտի (տեղեկատուական տեխնոլոգիաներ) արագընթաց զարգացման, թուային կամ ցանցային համակարգերու, ամպային (cloud) ենթակառոյցներու եւ համացանցային պայմաններու մէջ կը ձեւաւորուին նոր իրողութիւններ, որոնք նոր

մարտահրաւերներ կը ստեղծեն կեանքի բոլոր ոլորտներուն համար: SS ոլորտին մէջ տեղի ունեցած հիմնական փոփոխութիւնները ուղղակիօրէն կ'ազդեն հայերու ինքնութեան պահպանման հարցերուն վրայ. այսպէս.

Ա. «Թուային սփիւռք»ը կու գայ փոխարինել ւսանդական «սփիւռք» հասկացողութիւնը,

Բ. կ'առաջանայ կրթական նոր մշակոյթ:

Որո՞նք են «թուային սփիւռք»ի նոր ընկալումները՝ տեղեկատուութեան շրջանառութիւն մէկ կողմէ սփիւռքի եւ Հայաստանի, միւս կողմէ՝ անդր-ազգային համայնքներու միջեւ: Ստեղծուած այս «վըրջուալ» (virtual) միջավայրը, տարբեր ճամբաներով, մանաւանդ՝ հաղորդակցութեան միջոցով կը նպաստէ ինքնութեան վերակենդանացման:

SS ոլորտի փոփոխութիւնները իրենց ազդեցութիւնը ձգած են նաեւ կրթական տարածքին վրայ: Ստեղծուած է ուսանողներու նոր «տեսակ» մը, որուն համար «թէքնոլոճի»ն տեղեկութիւն ստանալու միջոց դարձած է: Այսօր նոյնքան կարեւոր է թէ ինչպէ՛ս կը սորվինք, որքան՝ ի՞նչ կը սորվինք: Կրթական նոր մշակոյթը կարիք ունի ընկերային եւ տեխնիկական ենթակառուցուածքները նորովի օգտագործելու, որ հայերուն գրաւիչ եւ նորարարական փորձառութեան հնարաւորութիւններու առիթ կու տայ:

ՀԲԸՄի հայկական համացանցային համալսարանը (Armenian Virtual college), իր առաքելութեամբ կը լրացնէ այդ բացը, կրթական համացանցային նիւթեր հանրութեան տրամադրելով: ՀՀՀ-ը, հայկական նիւթերը բոլորին հասանելի դարձնելով, հաղորդակցութիւն կը ստեղծէ, կրթական նոր միջոցներ կը տրամադրէ, ւսանդական ուսուցումը նոր կրթութեան զուգորդելով:

Ի՞նչ կ'առաջարկէ ՀԲԸՄ-ի ՀՀՀ-ը.
-Հայոց լեզուի, հայոց պատմութեան, մշակոյթի եւ շախմատի համացանցային ուսուցում:
-Դասընթացքներ եօթը լեզուներով՝ արեւելահայերէն, արեւմտահայերէն, ան-



գլերէն, ռուսերէն, ֆրանսերէն, սպաներէն եւ թրքերէն:

-Բոլորին հասանելի համացանցային կրթութիւն, առանց տարիքի, բնակութեան վայրի կամ գիտելիքներու մակարդակի խտրութեան:

ՀՀ-ը նկատի առնելով որպէս ռազմավարական գործիք եւ հիմք ունենալով

«Գիտելիք + հաղորդակցութիւն = ինքնութիւն» (Knowledge + connection = identity) հաւասարումը, հետեւեալ կէտերով կրնանք ամփոփել ՀՀ-ի առաքելութիւնը.

1-Վերակենդանացնել հայկական ինքնութիւնը

2-Կապ ստեղծել ամբողջ աշխարհի հայերուն միջեւ

3-Երիտասարդութիւնը մի՛շտ որպէս թիրախ դիտել

4-Տարածել հայ ըլլալու հպարտութիւնը

5-Օգնել ոչ-աւանդական հայերուն

6-Հասնիլ նոր ձեւաւորուած սփիւռքին

7-Ծառայել Թուրքիոյ հայ համայնքներուն

8-Աջակցիլ Հայաստանի զբօսաշրջութեան զարգացման

9-Շարունակել հաւատարիմ մնալ հայկական կրթութեան

«ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՆ ՄԷՋ

1876-1923» ԵՐԿԻՆ Գ. ՀԱՏՈՐԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ

Վերջերս, Գահիրէի ՀԲԸՄ-ի կողմէ հրատարակուեցաւ «Հայաստան եւ հայերը արաբական մամուլին մէջ 1876-1923» եօթը հատորներով ծրագրուած շարքին երրորդը:

Այս երրորդ հատորը, որուն խորագիրն է «Հայերը եւ երիտասարդ թուրքերը 1897-1908», կը բաղկանայ 780 էջերէ եւ կը տեղեկագրէ Համիտեան ջարդերուն (1894-1896) յաջորդող ժամանակաշրջանը, մինչեւ 24 Յուլիս 1908-ի Օսմանեան յեղաշրջումը, ինչպէս որ հրատարակած են այդ ժամանակուան արաբական թերթերը:

Այս երրորդ հատորին մէջ լոյս տեսած յոդուածները կը նկարագրեն Սուլթան Ապտիլ Համիտի կառավարութեան կատարած բարբարոսութիւններն ու կոտորածները, ճնշելու համար հայերը եւ խափանելու անոնց ազգային ձեռնարկութիւնները:

Նշենք թէ Գահիրէի ՀԲԸՄ-ը այս մեծածաւալ ծրագրին ձեռնարկած է 2001-ին օժանդակութեամբ դոկտ. Մոհամէտ Րի-

ֆա'աթ Էլ Իմամի եւ իր ղեկավարած պատմաբաններու խմբակին, որոնք Եգիպտական Ազգային Գրադարանի արխիւներուն մէջ 383 արաբակա օրաթերթերէ եւ պարբերաթերթեր պրպտելով, հաւաքած են բոլոր այն յօդուածները, որոնք աղերս ունին հայերուն եւ հայկական հարցին հետ 1876-էն մինչեւ 1923:

Ընդհանուր առմամբ, յօդուածներու 36 հազար էջեր կը պարփակեն այս եօթը հատորները, որոնցմէ առաջինին շնորհանդէսը տեղի ունեցաւ մեծ շուքով Շաբաթ, 7 Մայիս 2016-ին, Պըլըքտանեան հանդիսասրահին մէջ, նախաձեռնութեամբ Գահիրէի ՀԲԸՄ-ին:

Նկատի ունենալով այս հատորներէն ոմանց լայնածաւալ պարունակութիւնը, անոնցմէ իւրաքանչիւրը պիտի հրատարակուի մէկէ աւելի հատորներով:

*ՀԲԸՄ-ի կայքէջէն քաղեց՝
Անայիս Ճիզմէճեան*



ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅ ԹԱԳՈՒՀԻՆԵՐԸ

Գաղտնիք չէ, որ Կիլիկեան թագաւորութիւնը կարելոր դեր խաղացած է Խաչակիրներու արշաւանքներուն ընթացքին: Խաչակիրները սիրով ընդունուած են Կիլիկեան Հայաստանի մէջ աւելի, քան այլ երկիրներու մէջ:

Աւելի հետաքրքրական է այն փաստը, թէ Երուսաղէմի թագաւորութեան 200 տարիներուն ընթացքին, թագուհիներուն կարելոր մէկ մասը հայկական ծագում ունեցած է: Իշխող թագուհիներէն ինը եւ թագուհիներուն նաժիշտներէն վեցը հայեր եղած են. անոնցմէ շատեր մեծ ազդեցութիւն ձգած են երկրին պատմութեան վրայ, գործելով որպէս խնամակալները իշխող մանուկ կամ պատանի թագաւորներուն:

Այստեղ կը ներկայացնենք անոնցմէ մէկ քանին.

Արտան Հայաստանէն (12-րդ դար)
Եղած է դուստրը ազնուական հայու մը՝ Մարաշի իշխանին, որ Թաթուլ կամ Թորոս կոչուած է:

Արտա թագուհին, որպէս աթոռակից իշխած է 1100-1105 տարիներուն:

Ամուսնացած է Պոլտուհի Իշխանին հետ, որ Խաչակիրներու առաջին արշաւանքներու առաջնորդներէն էր եւ որ Արտայի հօր օգնութեամբ դարձած է Ուրֆայի Կոմս:

Երբ Խաչակիրները նուաճեցին Երուսաղէմը Պոլտուհի Կոտֆրիի առաջնորդութեամբ, անոր եղբայրը՝ Պոլտուհինը դար-



Մելիսանդ թագուհի

ձաւ Երուսաղէմի թագաւոր, հետեւաբար կինը՝ Արտան դարձաւ Երուսաղէմի թագուհի:

Երուսաղէմ, այս առաջին թագուհիէն ետք, ունեցած է ութ այլ թագուհիներ եւս.

Մելիթէնի Մորֆին (?-1126)
Երուսաղէմի թագուհի Մելիսանտ (1105-1162)

Ազնէս Տը Գորթնի (1136-1184)

Մարիա Քոմնէն Երուսաղէմի թագուհի (1154-1217)

Սիպիլա Երուսաղէմի թագուհի (1160-1190)

Իզապէլա Ա. Երուսաղէմի (1172-1205)

Մարիա Տը Մոնֆէրրա (1192-1212)

Իզապէլա Բ. Երուսաղէմի (1212-1228)

Ասոնցմէ իւրաքանչիւրին առնչութիւնը հայութեան հետ, ծնողին մէկ կողմէ եղած ըլլալու է, դատելով անուններէն: Հաւանաբար պրպտումներով կարելի է իմանալ անոնց տոհմական պատմութիւնը եւ կեանքի մանրամասները:



Մարիա Քոմնէն եւ Երուսաղէմի Ամալրիք թագաւորը



ՆՈՐ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒ ՄԸ

Նկատի առնելով որ Գահիրեի մեջ ՀՀՀ-ի աշխատանքները սկսած, զանոնք խթանած եւ անոր պատասխանատուութիւնը վարած տիկ. Աննա Թրայեան, կեանքի պայմաններու բերումով պիտի դադրէր այս աշխատանքէն, անոր փոխարինելու կոչուած է տիկ. Ասիա Սիմոնեան, աշխոյժ պահելու համար Գահիրեի ՀՀՀ-ի եւ Երեւանի կեդրոնին կապը:

Տիկ. Աննա Թրայեանի յաջողութիւն եւ բարեբեր օրեր կը մաղթենք, իսկ տիկ. Ասիա Սիմոնեանի՝ եռանդ եւ համբերութիւն, այս կարելոր եւ օգտաշատ կեդրոնը աշխոյժ պահելու համար:



ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՕՓԵՐԱՆԵՐ

Որքան ալ զարմանալի թուայ, Քրիստոսէ առաջ 95-55 թուականներուն իշխած Հայոց Արքայ, Արքայից Արքայ Տիգրան Մեծին նուիրուած են անելի քան երկու տասնեակ օփերաներ, թիւով 23, որոնք յօրինուած են Երոպայի ամենայայտնի, յատկապէս իտալացի երաժիշտներու կողմէ:

Այստեղ կու տանք ցանկը այդ օփերաներուն.

1. Վիվալտի, «Տիգրանը»
2. Նիկոլա Փուչչինի՝ «Տիգրան Մեծ»
3. Տ. Ալբրոնի՝ «Տիգրան Մեծ՝ թագաւոր Հայաստանի»
4. Մ. Բոնոչինի՝ «Տիգրան Մեծ՝ թագաւոր Հայաստանի»
5. Ն. Ռիջինի՝ «Տիգրան Մեծ»
6. Ճ. Պ. Լամբունիանի՝ «Տիգրան Մեծ»
7. Ֆ. Գասպարինի, Ֆ. Կոնտի եւ Զ. Մորլանդի հետ՝ «Տիգրան Մեծ»
8. Եոհան Հասսէ՝ «Տիգրան Մեծ»
9. Զ. Արենա՝ «Տիգրան»
10. Լապիս Սանթոս՝ «Տիգրան»
11. Զ. Պազանելի՝ «Տիգրան Մեծ»
12. Քրիստոֆ Գլիկ՝ «Տիգրան»
13. Պ. Գուլիելմի՝ «Տիգրան Մեծ»



14. Զ. Գոլլա՝ «Տիգրան»
15. Ա. Թոճճի՝ «Տիգրան»
16. Ի. Սելոնիաթ՝ «Տիգրան»
17. Դ. Սկարլատի՝ «Տիգրան Մեծ կամ Պոմպէոսը Հայաստանում»
18. Զ. Սաոթի՝ «Տիգրան»
19. Փիետրո Բեռնարդոնի՝ «Տիգրան»
20. Ճորճ Հենտել՝ «Տիգրան Մեծ»
21. Ա. Արտամանով՝ «Տիգրան Մեծ»
22. Հոտս՝ «Տիգրան Մեծ»
23. Ա. Վիվալտի, Բ. Միկելի, Ն. Ռոմալդի՝ «Բարեգործը, որ կը յաղթահարէ սիրոյ եւ ատելութեան, կամ՝ Տիգրան»:



ՄԱՀ ԵՒ ՑՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆ

ՕՆՆԻԿ ԱԻԱԳ ՍԱՐԿԱԻԱԳ ՊՕՂՈՍԵԱՆ

4 Օգոստոս 2017-ին ի Տէր հանգեալ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երկարամեայ սպասաւոր Բարեշնորհ Պօղոս-Օսնիկ Աւագ Սարկաւագ Պօղոսեանը եւ որպէս այդ հաւանաբար կը համարուի Սփիւռքի ամենէն երկար տարիներ ծառայած սարկաւագը:



5 Օգոստոս 2017-ին կէսօրէն վերջ ժամը 3-ին Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ ննջեցեալի յուղարկաւորութեան ծիսակատարութիւնը, հանդիսապետութեամբ Գահիրէի Առաջնորդական Փոխանորդ Հոգեշնորհ Տ. Գաբրիէլ Վարդապետ Սարգսեանի եւ մասնակցութեամբ Աղեքսանդրիոյ Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Գերապայծառ Տ. Գրիգոր Օգոստինոս Եպիսկոպոս Գուսանի ու ներկայութեամբ Ղպտի Ուղղափառ քոյր եկեղեցւոյ ներկայացուցիչներու:

Վերջին հրաժեշտի արարողութեան ներկայ էին նաեւ Թեմական Ժողովի, եկեղեցւոյ Հոգաբարձութեան անդամներ, ինչպէս նաեւ մշակութային, մարզական ու բարեսիրական միութիւններու եւ կազմակերպութիւններու վարչականներ եւ սգակիր հոծ բազմութիւն մը:

Եկեղեցւոյ հետ Պօղոս-Օսնիկ Պօղոսեանի կապը սկսած է դեռ մանուկ հասակէն.

1975-ի Դեկտեմբերին, ձեռնադրուած է սարկաւագ, ձեռամբ Եգիպտոսի Հայոց Թեմի նախկին Առաջնորդ Հոգեւոյս Զաւէն Արքեպիսկոպոս Չինչինեանի, իսկ այնուհետեւ՝ երկարամեայ ծառայութեան դիմաց անոր շնորհուած է նաեւ աւա-

գութեան աստիճան:

Նշենք նաեւ որ եգիպտահայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Աշոտ Եպիսկոպոս Մնացականեանը, գնահատելով բարեշնորհ Պօղոս-Օսնիկ Աւագ Սարկաւագ Պօղոսեանի եկեղեցանուէր գործունէութիւնը, միջնորդած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրիէլ Երկրորդ Ամենայն

Հայոց Կաթողիկոսին եւ Նորին Սրբութիւնը բարեշնորհ սարկաւագը պատուած է Ս. Ներսէս Շնորհալի շքանշանով:

Շքանշանի կոնդակին մէջ ըսուած է. «Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Դուք տասնամեակներ շարունակ նախանձախնդրօրէն ներդնում էք Ձեր ջանքերը, որպէսզի Գահիրէի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ կանոնաւորապէս եւ վայելչութեամբ կատարուեն ծիսական արարողութիւնները եւ նրա հովանու ներքոյ միշտ աշխոյժ ու բարի գործերով իմաստաւորուած լինի համայնքային կեանքը»:

Խորապէս հաւատացել, լռակեաց եւ ծառայասէր սարկաւագը պարտաճանաչութեան, պատասխանատուութեան, ինչպէս նաեւ հաւատարմութեան ու բարութեան օրինակ եղած է իր ամբողջ կեանքին ընթացքին:

Բարի եւ հաւատարիմ ծառայ մտի՛ր քո Տիրոջ ուրախութեան մէջ:

Թաղումի կարգը շարունակուեցաւ Հելիոպոլսոյ Ամենայն Սրբոց Ազգային գերեզմանատունը, ուր հանգուցեալին մարմինը ամփոփուեցաւ ընտանեկան դամբարանին մէջ:

Խունկ եւ աղօթք իր յիշատակին:



ՑԱԽԱԿՑԱԳԻՐ

«Արեւ»ի նախկին վաստակաշատ խմբագիր ողբացեալ Աւետիս Եափուճեանի վերաբերեալ ցաւակցագիրը եւ անոր առնչուած այլ նիւթեր լոյս պէտք է տեսնէին «Տեղեկատու»ի նախկին թիւին մէջ:

Ողբացեալ Եափուճեանի առնչուած այդ նիւթերը ամբողջութեամբ հրատարակուած են, բացի ցաւակցագիրէն, որ անհասկնալի պատճառով մը լոյս տեսած չէ:

Այնպէս կը թուի, թէ պարբերաթերթիս նոյն թիւին մէջ, նոյն ծաւալով եւ ձեւով առկայ այլ ցաւակցագիր մը միտքերու մէջ շփոթ յառաջացուցած է:

Հերեւաբար ցաւակցագիրը ներկայ թիւով կը հրատարակուի եւ այս առնչութեամբ ողբացեալին ընտանեկան պարագաներուն եւ պարբերաթերթիս ընթերցողներուն ներողամտութիւնը կը հայցենք:



S.

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի մէջ գործող հինգ կառոյցները՝ ՀԲԸՄ-ի Եգիպտոսի Շրջանակային Յանձնաժողովը, ՀԲԸՄ-ի Գահիրէի և Աղեքսանդրիոյ մասնաճիւղերը, ինչպէս նաեւ Գահիրէի և Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ մարզական ակումբները խոր կսկիծով տեղեկացան ՀԱՀ «Արեւ» թերթի վաստակաշատ նախկին խմբագիր (1967-1990) Դոկտ. Աւետիս Եափուճեանի **մահուան**, որ տեղի ունեցած է 5 Յուլիսին, Սիտնիի մէջ:

Ան հաստատուած էր Սիտնի **եւ** կը վարէր տեղւոյն ՀԲԸՄ-ի «Միութիւն» ամսաթերթի հայկական բաժնի խմբագրութիւնը:

Այս տխուր առիթով մեր **եւ** վերոյիշեալ կառոյցներուն բոլոր անդամներուն ցաւակցական անկեղծ զգացումները կը յայտնենք իր տիկնոջ Անժէլ Եափուճեանի, իր զաւակներուն Արեգի և Մարոյի և իրենց ընտանիքներուն, ինչպէս նաեւ ՌԱԿ-ի Եգիպտոսի շրջանակին:

Ամենակալէն կը խնդրենք որ երկնային հանգիստ պարգեւէ հանգուցեալին հոգիին:

Խունկ եւ աղօթք իր յիշատակին:

Գահիրէի ՀԲԸՄ-ի
Վարչութիւն
Տոքթ. Վիգէն Ճիզմէճեան
Ատենապետ

ՀԲԸՄ-ի Եգիպտոսի
Շրջանակային Յանձնաժողով
Օննիկ Պըլըքտանեան
Ատենապետ



ԱՂԵՔՍԱՆՊԻՏՈՅ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Ուրբաթ, 14 Յուլիսին սկսաւ 2017ի Եգիպտահայ պասքէթ-պոլի մրցաշարքերուն անդրանիկը, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խաղերով, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմին Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ նախագահութեամբ Տէր եւ Տիկին Նուպար Սիմոնեանի, ատենապետ Գահիրէի Պատկառելի Թեմական Ժողովին:

Առաջին մրցումը ՀՄԸՄ Կամքին և հիւրընկալ ակումբի խումբերուն միջեւ էր: Սքանչացումի արժանի է Աղեքսանդրիոյ մարզական այս երկու ակումբներուն անբեկանելի կամքը, պասքէթ պոլի երէց տղոց խումբեր պահելու, հակառակ դժուարութիւններուն: Անոնց համար բաժակի տիրանալը առաջնահերթ չէ այնքան, որքան այս ակումբներուն աւանդական ձեռնակները անխափան պահելը, որ ինքնին մեծ յաղթանակ է:

Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց մակարդակը ՀՄԸՄ Կամքի տղոցմէ աւելի բարձր ըլլալուն, անոնք յաղթական հանդիսացան 56-36 արդիւնքով ու անմիջապէս անցան Կիրակի օրուան աւարտական մրցումին:

Օրուան երկրորդ մրցումը Գահիրէէն ՀՄԸՄ Արարատին և Սրբ. Թերեզայի խումբերուն միջեւ էր: Այս տարի Արարատի խումբը կը բաղկանար միայն պատանի ու երիտասարդ մարզիկներէ, ուստի իրենց խաղարկութիւնը շատ արագ էր ու ներդաշնակ, ի տարբերութիւն Սրբ. Թերեզայի խումբին, որ կը տառապէր անկազմակերպութիւնէ ու շփոթութենէ: Մի քանի փոքր, սակայն անտեղի ջղային երեւոյթներէ ետք, Արարատի խումբը դիրին յաղթանակ մը տարաւ, 61-39 արդիւնքով:

Շաբաթ, 15 Յուլիսին միայն մէկ մրցում տեղի ունեցաւ, ամենէն սպասուածը՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն և ՀՄԸՄ Արարատին միջեւ:

րատին միջեւ: Գահիրէէն, խումբերուն ընկերակցող համակիրները ճոխ բազմութեամբ մը գրաւած էին հանդիսատեսներուն աթոռները:

Դժուար էր Արարատի դեռատի մարզիկներուն վիճակը, ի տես Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երիտասարդ ու փորձառու մարզիկներուն, որոնցմէ իւրաքանչիւրը բարձրորակ խաղարկութիւն կը ցուցաբերէր:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը տիրապետեցին խաղին սկիզբէն մինչեւ վերջ, թէպէտ Արարատի խաղացողներէն մի քանին, 3 թիւի արձակումներով եւ իրերայաջորդ արագ յարձակումներով, թիւի տարբերութիւնը կրցան 10ի իջեցնել, յոյսի նշոյլ մը պարգեւելով իրենց համակիրներուն, սակայն ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը շուտով ջլատեցին զայն եւ մրցումը վերջացուցին ի նպաստ իրենց, 72-49 արդիւնքով:

Ինչպէս ամէն տարի, այս տարի եւս հիւրընկալ ակումբին վարչութիւնն ու Տիկնանցի անդամուհիները պարանցիկ երեկոյ մը՝ Royal Night կազմակերպած էին Club Syrienի մէջ: Գահիրէի երիտասարդները, միանալով Աղեքսանդրիոյ երիտասարդներուն, շէնցուցին մթնոլորտը իրենց աշխոյժ հայկական շուրջպարերով:

Իսկապէս որ յաջող երեկոյ մըն էր. սրահին ճաշակաւոր զարդարանքը, համեղ ուտելիքներն ու DJ Այգին երաժշտութիւնը կը գերազանցէին զիրար:

Կիրակի օրուան աւարտական մրցումը երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻներուն միջեւ էր: Նախքան մրցումին սկսիլը, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻն երկարամեայ ու նուիրեալ ատենապետ Կարպիս Թօսունեան խօսք առաւ ու շնորհակալութիւն յայտնեց այն ակումբներուն, որոնք մասնակցած էին մրցաշարքին եւ բոլոր անոնց, որոնք օժանդակած էին, յատկա-



պէս Տէր և Տիկին Վարդ Ալեքսանեանին, որոնք բոլոր մրցաշարքերուն մէտայլները կը նուիրեն:

Երկու ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐներուն միջեւ մրցումները միշտ հաշտ կ'ըլլան ու հանդարտ: Փորձառու մարզիկներով սկսաւ Գահիրէի խումբին մարզիչը ու հետզհետէ փոխարինեց զանոնք պատանիներով ու նորեկներով: Աղեքսանդրիոյ մարզիկները, իրենց կարողութեան սահմաններուն մէջ, լաւ խաղարկութիւն ցուցաբերեցին ու երբեմն խաղը հետաքրքրական դարձուցին:

Երբ իրաւարարին աւարտելու սուլիչը հնչեց, արդիւնքը 72-61 էր, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐին: Մրցաշարքին բաժակը, որ նուիրուած էր Տիկին Անի Արթինեանի ու զաւակներուն՝ Օր. Դանիայի եւ Տոքթ. Վահէի կողմէ, ի յիշատակ իրենց ծնողաց ու մեծ ծնողաց ողբ. Յակոբ եւ Զապէլ Տիչէքէնեաններու եւ ողբ. Սիրվարդ Արթինեանի, ստացաւ խմբապետ



Արմէն Վարժապետեանը:

Վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի խումբին երկարամեայ պատասխանատու Յակոբ Գարակէօզեանի եւ օգնական Քրիս Սիմոնեանի, նաև աւագ մարզիչ Ամր Աշուրի եւ օգնական Ալաա Զահրանի, այս յաղթանակին համար:

Վարձքը կատար Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐի Վարչութեան եւ Տիկնանց Յանձնախումբին, յաջող մրցաշարք մը կազմակերպելու համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան





ՀՄԸՄ ԱՐԱՐԱՏԻ 2017-Ի ՄՐՑԱՇԱՐՔԸ

Հինգշաբթի, 22 Սեպտեմբեր 2017-ին սկսաւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի տարեկան պասքէթ-պոլի եգիպտահայ մրցաշարքը, Հայաստանի անկախութեան 26-րդ ամեակին նուիրուած, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց Թեմին Բարեխնամ Առաջնորդ Գեր. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի եւ նախագահութեամբ Տէր և Տիկին Շանթ Կապէեանի:

Ձեռնարկին պատուոյ հիւրերն էին Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսա, Վիճակաւոր Եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքին եւ դոկտ. Մելգոնեան, արտակարգ եւ լիազօր դեսպան Հայաստանի Հանրապետութեան:

Օրուան առաջին մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի 14 տարեկանէն վար աղջիկներուն եւ տեղական խումբի մը միջեւ էր. հիւրընկալ ակումբին աղջիկները յաղթական հանդիսացան եւ տիրացան Տէր եւ Տիկին Վարուժ Զիլինկիրեանի նուիրած բաժակին:

Յաջորդ մրցումը Հ.Մ.Ը.Մ. Արարատի եւ Հ.Մ.Ը.Մ. Կամքի երէց տղոց խումբերուն միջեւ էր. կարողութիւններու մեծ տարբերութեան պատճառով խաղը չկրցաւ ներկաներուն ուշադրութիւնը գրաւել եւ ավարտեցաւ 68 – 35 արդիւնքով, ի նպաստ Արարատին:

Ուրբաթ, 23 Սեպտեմբերի յայտագրին վրայ երեք մրցումներ կային. Հ.Մ.Ը.Մ. Արարատի 14 տարեկանէն վար տղաքը

խաղացին տեղական խումբի մը դէմ, յաղթեցին ու տիրացան Տէր եւ Տիկին Շէրիֆ Գոլոյեանի նուիրած բաժակին:

Երկրորդ մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երէց տղոց խումբերուն միջեւ էր: Մրցումը սկիզբը ձանձրալի էր մակարդակներու տարբերութեան պատճառով, մինչեւ որ Գահիրէի խումբին մարզիչը, իր առաջնակարգ մարզիկները հեռացնելով դաշտէն, խաղը յանձնեց պատանիներուն եւ նորեկներուն: Մրցումը ավարտեցաւ 70 – 50 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻին:

Ահաւասիկ հասած էր ժամանակը, մի քանի տարիէ ի վեր մեծ ժողովրդականութիւն վայելող խաղին՝ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի ոչ թէ տղոց, այլ երէց աղջիկներու մրցումին: Երկու խումբերն ալ տասնութական մարզիկուհիներով գրաւեցին դաշտը, տաքնալու փորձեր ընելու եւ իրենց կարողութիւնները ցուցադրելու համար:

Ջիղերու պայքարը սկսաւ մրցումին առաջին իսկ վայրկեանէն ու ներկաներուն սիրտերը տրոփեցին մինչեւ խաղին ավարտը: Մէկ պասքէթ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻին, մէկ պասքէթ Հ.Մ.Ը.Մ. Արարատին, սխալ յարձակում մը այս խումբէն, նոյնքան ձախող յարձակում մը միւսէն ու երկրորդ քառորդախաղի ավարտին արդիւնքը բաւական խոնարհ էր՝ 22 – 20 ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻի:

Երրորդ քառորդախաղին Արարատի աղջիկները աւելի կազմակերպեցին իրենց խաղը ու 6 թիւի առաւելութիւն արձանագրեցին: Սակայն, չորրորդ քառորդախաղը աւելի նպաստաւոր եղաւ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն համար, որոնք փոխելով իրենց խաղաձեւը, կարողացան հաւասարիլ ու անցնիլ:





Երբ վերջապես իրաւարարին աւարտի սուլիչը հնչեց, արդիւնքը 50 – 48 էր, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներուն, որոնք ստացան Տէր եւ Տիկին Մանուկ Պօհնալեանի կողմէ նուիրուած բաժակը:

Վարձքը կատար խումբին մարզիչ Քարթէն Ալաա Զահրանի եւ օգնական Քարթէն Մակէտ Ահմատի, նաեւ խումբին պատասխանատու Սօսի Յակոբեանի, իրենց տարած աշխատանքին համար:

Շաբաթ, 24 Սեպտեմբերին ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԸՆ եւ Հ.Մ.Ը.Մ Արարատէն կազմուած վեթերաններու խումբը խաղաց Մատինադ Նասրի վեթերաններուն դէմ: Մրցումը զուարճալի էր ու բարեկամական եւ աւարտեցաւ հայ վեթերաններու յաղթանակով:

Նախքան աւարտական մրցումին սկսիլը, հնչեցին եգիպտոսի եւ Հայաստանի քայլերգները: Հանդիսատեսները կը պատրաստուէին իրենց տեղերը գրաւել, երբ, ի զարմանք ներկաներէն ոմանց, առաջին անգամ ըլլալով եգիպտահայ մրցաշարքի մը ընթացքին կը հնչէ «Յառաջ Նահատակ» կամաւորական քայլերգը ...: Մարզական ազնիւ ձեռնարկ մը քաղաքական հովանիի տակ առնելը խոտոր կը համեմատի իր նպատակին, որն է «Մարզական ոգիով համախմբել եգիպտահայութիւնը, մանաւանդ երիտասարդութիւնը» եւ ուրիշ ոչինչ:



Մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ հիւրընկալ ակումբին երեց տղոց խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը խառնաշփոթ ու աններդաշնակ խաղարկութեամբ յոյս ներշնչեցին Հ.Մ.Ը.Մ. Արարատի խաղացողներուն ու մարզիչին: Սակայն երկրորդ քառորդախաղէն սկսեալ ցոյց տուին իրենց իսկական մակարդակը. շուտով 20 թիւի առաւելութիւն մը բացին, ցրելով յաղթանակի պատրանքը Արարատի համակիրներուն միտքերէն: Մրցումը աւարտեցաւ 77 – 64 արդիւնքով, ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց, որոնք ստացան Տէր եւ Տիկին ԱրաՔէօհնէլեանի նուիրած բաժակը:

Վարձքը կատար խումբին մարզիչ Քարթէն Ամր Աշուրի, պատասխանատու Յակոբ Գարակէօզեանի եւ օգնական Քրիս Սիմոնեանի, այս յաղթանակին համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան





ՀՄԸՄ ԿԱՄՔԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Շաբաթ, 19 Օգոստոս 2017ին սկսաւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ Կամքի պասքէթպոլի տարեկան մրցաշարքը, հովանաւորութեամբ Եգիպտոսի Հայոց թեմին Բարեխնամ Առաջնորդ Գեր. Տ. Աշոտ Եպս. Մնացականեանի և նախագահութեամբ Տէր և Տիկին Վահէ Պէն-Օհանեանին:

Մրցաշարքէն մի քանի օր առաջ, Սրբուհի Թերեզայի ատենապետը գրաւոր կը յայտնէ թէ իր խումբը կը հրաժարէր մասնակցիլ ոչ միայն Կամքի մրցաշարքին, այլ 2017-ի բոլոր մրցաշարքերուն, վարչութեան ու մարզիկներուն միջեւ եղած անակնկալ անհամաձայնութեան մը պատճառով: Հետեւաբար Սրբուհի Թերեզան իրաւունք պիտի չունենայ իր իսկ տարեկան մրցաշարքը կազմակերպելու, 2017-ի ընթացքին:

Առաջին մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ միջեւ էր: Հակառակ ուժերու, թիւի ու մակարդակներու անհամեմատ տարբերութեան, Աղեքսանդրիոյ տղաքը խաղացին առանց յուսահատելու: Միւս կողմէ, Գահիրէի խումբին մարզիչը պատանի ու նորելուկ մարզիկներուն առիթը տուաւ դաշտ իջնելու առաջնակարգ մարզիկներուն կողքին, մրցում խաղալու փորձառութիւն ձեռք ձգելու համար: Խաղը աւարտեցաւ ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻին, 83-42 արդիւնքով:

Օրուան երկրորդ մրցումը հիւրընկալ խումբին ու ՀՄԸՄ Արարատին միջեւ էր: ՀՄԸՄ Կամքի վաղեմի մարզիկ Զաւէն Լէյլէկեան, խումբին տրամադրութիւնը բարձր պահելու եւ ինքնավստահութիւն ներշնչելու համար, դաշտ իջած էր ու կը ջանար վազել Արարատի պատանիներուն նման, սակայն առաջին քառորդախաղի աւարտին ստիպուած քաշուեցաւ խաղէն:

Մինչեւ երկրորդ քառորդախաղի աւարտը արդիւնքի տարբերութիւնը քիչ էր, 26-24, ի նպաստ ՀՄԸՄ Արարատին, սակայն հետզհետէ Կամքի խաղացողները չկարողացան տոկալ ու մրցումը

աւարտեցաւ 66-48 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ Արարատին:

Մրցումներէն ետք, ակումբի օդասուն պարտէզին մէջ, Գահիրէէն ժամանած ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ և ՀՄԸՄ Արարատի համակիրներն ու մարզիկները աղեքսանդրիահայերուն հետ հաճելի երեկոյ մը վայելեցին:

Կիրակի, 20 Օգոստոսի յայտագրին վրայ աղջիկներու մրցում մը կար, ՀՄԸՄ Արարատի եւ ՀՄԸՄ Կամքի խումբերուն միջեւ: Հակառակ որ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տարիներէ ի վեր աղջիկներու խումբ ունի, հրաւեր չէր ստացած:

Արարատի աղջիկները ներկայ էին 18 մարզիկուհիներով, մինչ Կամքը հինգ գլխաւոր խաղացողներէ զատ երկու պահեստի աղջիկներ ունէր միայն: Յամենայնդէպս գնահատելի է Կամքի պատասխանատուներուն տարած աշխատանքը, աղջիկներու խումբ կազմելու մէջ:

Արարատի աղջիկներուն մակարդակը շատ աւելի բարձր էր Կամքէն ու մրցումը աւարտեցաւ ի նպաստ իրենց, 52-33 արդիւնքով: Յաղթական աղջիկները ստացան բաժակը, որ նուիրուած էր Տէր եւ Տիկին Պերճ Միսքեանի կողմէ:

Մրցաշարքին աւարտական մրցումը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ ՀՄԸՄ Արարատի միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ երիտասարդ, սակայն փորձառու մարզիկները, իրենց կողքին ունենալով պատանիները, մրցեցան Արարատի խումբին դէմ ինքնավստահ ու հանդարտ կերպով ու առաւելութիւն ապահովեցին մրցումին ամբողջ տեւողութեան: Սակայն, ի զարմանք ակումբի համակիրներուն, առաւելութիւնը բարձրանալէ ետք աւելի քան քան թիւով, մի քանի վայրկեանի մէջ անբացատրելի կերպով գահավիժեց ու իջաւ մէկ թիւի: Արարատի մարզիկներն ու համակիրները սիրտ առին ու յաղթանակի կրկներելոյթ մը շողաց իրենց դիմաց:

ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը իրերայաջորդ յաջող արձակումներով շարունակեցին մրցակից խումբը, արդիւնքի տարբերու-

շար. էջ 20



ԳԱՀԻՐԷԻ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ

Հինգշաբթի, 5 Հոկտեմբեր 2017-ին սկսաւ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տարեկան պասքէթ պոլի եգիպտահայ մրցաշարքը, որ այս եղանակին վերջին մրցաշարքն էր եւ նուիրուած էր եգիպտոսի Զինեալ Ուժերուն 6 Հոկտեմբերի յաղթանակի 44-րդ տարեդարձին:

Մրցաշարք կը հովանաւորէր եգիպտոսի Հայոց Թեմին Բարեխնամ Առաջնորդ Գերշ. Տ. Աշոտ Եպս. Մնացականեան եւ անոր կը նախագահէր Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ պատուոյ նախագահ Տէր և Տիկին Հրաչ Սիմոնեան: Մրցաշարքին պատուոյ հիւրերն էին Գերապայծառ Գրիգոր Օգոստինոս Գուսա, Վիճակաւոր եգիպտոսի Հայ Կաթողիկէ Համայնքին եւ դոկտ. Արմէն Մելգոնեան՝ Արտակարգ եւ Լիազոր Դեսպան Հայաստանի Հանրապետութեան:

Օրուան առաջին մրցումը հիւրընկալ ակումբի 18 տարեկանէն վար տղոց եւ Թայարան ակումբի խումբերուն միջեւ էր: Խաղը շատ արագ էր ու հետաքրքրական. ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը ինքնավստահ իջան դաշտ եւ զարմացուցին մրցակիցները իրենց խաղով: Այս տղոցմէ արդէն 7 մարզիկներ միացած են երէց տղոց խումբին, իրենց շատ լաւ խաղարկութեան համար: Մրցումը ավարտեցաւ ի նպաստ Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիկներուն, 88 – 32 ադրիւնքով եւ ստացան տոքթ. եւ տիկ. Յակոբ Աբիկեանի կողմէ նուիրուած բաժակը: Վարձքը կատար խումբի մարզիչ Քաբթէն Ալաա Զահրանի եւ օգնական Քաբթէն Մակետ Սալամայի, նաեւ խումբին պատասխանատու Ժիրայր Յակոբեանի, իրենց տարած աշխատանքին համար:

Օրուան երկրորդ մրցումը



Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Կամբի երէց տղոց խումբերուն միջեւ էր: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մարզիչը, բաւարար թիւի առաւելութիւն ապահովելէ ետք, իր առաջնակարգ մարզիկները փոխարինեց պատանիներով, որոնք նոյնքան գերազանց խաղարկութեամբ կարողացան ոչ միայն պահել, այլ ավելցնել թիւի տարբերութիւնը: Մրցումը ավարտեցաւ 62 – 30 արդիւնքով, ի նպաստ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղոց:

Ուրբաթ, 6 Հոկտեմբերի յայտագրին վրայ երեք մրցումներ կային: Առաջին հերթին դաշտ իջան ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐ ակումբին կրտսեր աղջիկները, որոնք խաղացին Հելիոլիտոյի աղջիկներու խումբին դէմ: Հակառակ որ ակումբին խումբը յաղթական հանդիսացաւ 26 – 21 արդիւնքով ու տիրացաւ Մարլօ Սիմոնեանի նուիրած բաժակին, սակայն տակաւին լուրջ աշխատանքի կը կարօտի:

Վարձքը կատար խումբի մարզիչ Քաբթէն Մակետ Սալամայի եւ նուիրեալ պատասխանատու Արմէն Պալթեանի, որոնց ճիգերուն շնորհիւ կազմուած է այս խումբը:

Երկրորդ մրցումը Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երէց աղջիկներու խումբերուն միջեւ էր: Մրցումը սկսաւ շատ արագ ու երկու կողմէն «յարձակումն» ու «պաշտպանութիւնը» երկվայրկեաններու ընթացքին, դաշտին մէկ ծայրէն միւսը կը թռցնէին գնդակն ու ժողովուրդին կեդրոնացումը:

Սակայն, յանկարծ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկները իրերայաջորդ ստոյգ ու յաջող արձակումներով, առաջին քառորդախաղը ավարտեցին 30 – 7 անսպասելի արդիւնքով: Մրցումին



ճակատագիրը որոշուած էր արդէն: Յաղթանակը ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ աղջիկներունն էր 64 – 36 արդիւնքով. անոնք ստացան Տէր և Տիկին Գէորգ Աւանտանի կողմէ նուիրուած բաժակը:

Վարձքը կատար խումբի մարզիչ Քարթէն Ալաա Զահրանին եւ օգնական Քարթէն Մակէտ Սալամայի, նաեւ խումբի պատասխանատու Սօսի Յակոբեանին, այս սքանչելի յաղթանակին համար:

Օրուան վերջին մրցումը Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատին միջեւ էր: Մինչեւ երկրորդ քառորդախաղի աւարտը ուժերը գրեթէ հաւասար էին, նոյնիսկ Աղեքսանդրիոյ խումբը առաւելութիւն արձանագրած էր 33 – 26 արդիւնքով:

Սակայն պահեստի խաղացողներու չգոյութեան պատճառով, Աղեքսանդրիոյ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը չկարողացան տոկալ ու մրցումը աւարտեցաւ 66 – 58 արդիւնքով, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ. Արարատին:

Շաբաթ, 8 Հոկտեմբերի յայտագրին վրայ երեք մրցումներ կային: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ փոքրիկ տղաքը շատ հետաքրքրական մրցում մը խաղացին Հելիոլիտոյի փոքրիկներուն դէմ: Իսկապէս ուրախալի էր տեսնել ակումբին փոքրիկ մարզիկներուն խաղը. անոնք ինքնավստահ ու անկաշկանդ խաղարկութեամբ ներկաներուն գնահատանքին եւ ուշադրութեան արժանացան, յաղթական հանդիսացան 27 – 10 արդիւնքով եւ անհուն ուրախութեամբ բարձրացուցին բաժակը, որ նուիրուած էր Տէր եւ Տիկին Կարէն Թուլումպաճեանի կողմէ:

Վարձքը կատար խումբի մարզիչ Քարթէն Մակէտ Սալամայի եւ պատասխանատու Արմէն Պալթաեանի, պասքէթ պոլի ապագայ աստղեր պատրաստելու աշխատանքին համար:

Նախքան վեթերաններու մրցումին սկսիլը, ակումբին սիրուած ատենապետ ժիրայր Տեփոյեան շնորհակալական խօսք ուղղեց Գօգօ Շամամեանին, որ մի քանի





տարիէ ի վեր, սիրայօժար կերպով ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մրցաշարերն ու ձեռնակները կ'անմահացնէ իր յաջող լուսանկարներով, եւ անոր յանձնեց յիշատակի նուէր մը:

Հայ վեթերաններու խումբը մրցեցաւ Ալ Զուհուրի վեթերաններուն դէմ ու լաւ խաղարկութեամբ մը յաղթական հանդիսացաւ 77-61 արդիւնքով:

Պր. Տեփոյեան, անգամ մը եւս բարձրախօսը առնելով, բարի գալուստ մաղթեց հանդիսատեսներուն, որոնք իրենց ներկայութեամբ կը քաջալերեն ակումբին տարեկան մրցաշարը. նաեւ շնորհակալութիւն յայտնեց մասնակցող բոլոր ակումբներուն, ապա յիշատակի նուէրներ յանձնեց մարզիկներ Մայք Նապիլ և Արմէն Վարժապետեանի, որոնք 2017-ի ընթացքին վերջնականապէս քաշուած էին երէց տղոց խումբէն, երկար տարիներ ծառայելէ ետք:

Ժամանակը հասած էր աւարտական մրցումին, Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ եւ Հ.Մ.Ը.Մ. Արարատի երէց տղոց խումբերուն միջեւ, որոնց մրցումները, տակաւին մի քանի տարի առաջ, սիրտհատնումի և ջիղերու քայքայման պատճառով կ'ըլլային. սակայն ոչ այլեւս: ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ տղաքը, իրենց բարձրորակ խաղարկութեամբ, սկիզբէն իսկ ջլատեցին Արարատի յաղ-



թանակի յոյսերը:

Մրցումը աւարտեցաւ ի նպաստ հիւրընկալ ակումբին 87 – 59 արդիւնքով ու յաղթական մարզիկները ստացան Տէր և Տիկին Յակոբ Գարակէօզեանի նուիրած բաժակը, ի յիշատակ իր եղբօր՝ ողբ. Լեւոն Գարակէօզեանի:

Վարձքը կատար խումբի մարզիչ Քարթէն Ամր Աշուրի եւ օգնական Քարթէն Ալաա Զահրանի, նաեւ խումբի պատասխանատու Յակոբ Գարակէօզեանի և օգնական Քրիս Սիմոնեանի, այս յաղթանակին համար:

Շնորհակալութեան արժանի է Տիկին Սեւան Տրդատեանը, որ մրցաշարքի երեք օրերուն ընթացքին հանդիսավարի դեր ստանձնած էր, յստակ առողջանութեամբ ու





սրամիտ մեջբերումներով մեծ յաջողութեամբ կատարելով զայն:

Շնորհակալական խօսք ունինք նաեւ Տէր և Տիկին Վարդ Ալեքսանեանի, որոնք միշտ կը նուիրեն մրցաշարքի մետայլները:

Վերջապէս վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ վարչութեան, յաջող մրցաշարք մը կազմակերպելու համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան



շար. էջ 16 էս →

ՀՄԸՄ ԿԱՄՔԻ ՄՐՑԱՇԱՐՔԸ

թիւ ձեռք ձգեցին ու մրցումը աւարտեցին 74-54 արդիւնքով: Խումբին աւելի քան քսան տարուան մարզիկ Մայք Նապիլ, որ կը խաղար իր վերջին մրցումը, ստացաւ Տէր եւ Տիկին Պերճ Միսքճեանի կողմէ նուիրուած բաժակը: Այո, Մայքը այլեւս մրցումներուն իր մասնակցութիւնը պիտի չբերէ, սակայն միշտ ներկայ պիտի ըլլայ իր երկրորդ տան՝ ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ մէջ ու պիտի քաջալերէ նորեւուկ ու մատղաշ

սերունդները:

Վարձքը կատար Գահիրէի ՀՄԸՄ ՆՈՒՊԱՐԻ խումբին պատասխանատու Յակոբ Գարակէօզեանի եւ օգնական Քրիս Սիմոնեանի, ինչպէս եւ մարզիչ Ամր Աշուրի եւ օգնական մարզիչ Ալաա Զահրանի, այս յաղթանակին համար:

Սօսի Ներետեան-Յակոբեան

